

ՄԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆ ՏՆՏԵՍԱԳԷՏԸ

ՌՈՐԵՐՏ ՍԱՐԻՆԵԱՆ

Միմոն Զաւարեանը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեան երկրորդ աւագ անդամն էր. Քրիստափոր Միքայէլեանի անձիջական գործակիցը. Բայց Ս. Զաւարեանը եղել է ոչ ճիշտն քաղաքական կուսակցութեան հիմնադիր, ոչ ճիշտն այդ կուսակցութեան շարքերի խտտաբանն զաստիարակ, այլ ինչ հետազոտող գիտնական տնտեսագէտ, որի ուսումնասիրութեան նիւթը կազմում է Հայ գիւղացիութիւնը:

Եօթանասուն տարի շարունակ Հայրենի ժողովուրդն ու մտաւորականութիւնը զրկուած են եղել ճեր քաղաքացի ազգային ճեմերի կեանքն ու գործը ճանաչելու հարատւութիւնից: Այս օրերին, երբ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը հողը վերատին յանձնում է օրինական տիրոջը, կարծում ենք, որ Հայ գիւղի ու նրա կարիքների, ինչպէս եւ տնտեսական զարգացման որոշ այլ հարցերի վերաբերեալ Ս. Զաւարեանի հայեացքների վերլուծութեանը նուիրուած Հայ տնտեսագիտական մտքի սակաւաթիւ հետազոտողներից մէկի՝ պրոֆեսոր Ռ. Սարինեանի այս յօդուածի հրատարակումը ճեր կողմից անժամանակ չի նկատուի:

Իր ընդգրկումներով 19րդ դարի վերջի եւ 20րդ դարի ըսկզբի հայ տնտեսագիտական միտքը բազմաբնոյթ էր: Հրապարակում էին ինչպէս տեսական, այնպէս էլ գործնական, վիճակագրական բնոյթի աշխատութիւններ: Տեսաբան-վիճակագիրները իրենց վերլուծութիւնները զուգորդում էին վիճակագրական նիւթի օգտագործումով: Վիճակագիր-տեսաբանները զբաղուած էին որոշակի եղանակներով ու մեթոդներով տնտեսագիտական հաւաքուած նիւթերի համակարգմամբ:

Սիմոն Զաւարեանը վիճակագիր տեսաբան էր: Զբաղում

էր երկրամասի ժողովրդական աշխատանքի համար հիմնականը հանդիսացող գիւղատնտեսութեան հետազոտմամբ: Գիւղատնտեսութեան Կովկասեան կայսերական ընկերութիւնը 1890ական թթ. կեսերին յատուկ քննութեան առաքելայ է դարձնում հողագործութեան վիճակը, որի ուսումնասիրութիւնը խիստ անմխիթար էր: Եւ, ահա, Ս. Զաւարեանը հրատարակում է ուսումնասիրելու անբերրիութեան պատճառները Երեսնի նահանգում եւ Կարսի մարզում: Լինելով հետազոտող 8953 ծուխ ունեցող 76 գիւղերում, նա բնութագրում է հողակոտուցուածքը, կլիմայական պայմանները, տնտեսութեան վարման ձեւերը եւ համակարգերը, կատարում անասնապահութեան, երկրագործութեան, ինչպէս նաեւ պարենային հարցի, անբերրիութեան եւ այն վերացնելու հնարատրութիւնների հանգամանակից վերլուծութիւն:

Ս. Զաւարեանը հարցերի իր մեկնութիւնը կատարում է, կիրառելով համեմատական եղանակը՝ զուգահեռներ անցկացնելով Ռուսաստանի ու երոպական երկրների հետ, շիւսակներով լուծելու բոլոր խընդիրները կամ բացարձակ ճշմարտութիւն համարող եզրակացութիւններ անելու: Ըստ Զաւարեանի, նման աշխատանքի կատարումը, այնուամենայնիւ, «մի քայլ առաջ կը լինի

ընդհանրապէս լեռնային երկրների եւ մասնատրապէս Երեսնի նահանգի ու Կարսի մարզի գիւղատնտեսութիւնը գիտական ու անյի ռացիոնալ հիմքի վրայ դնելու գործում»:

Ինչպէս նշում է Ս. Զաւարեանը, տնտեսական հարցերի քննութեան ժամանակ ինքն առաջնային տեղը յատկացրել է բնատնտեսական պայմաններին: Եւ ինչպէս ինքն է գրում, «Չժխտելով սոցիալական գործօնի, մասնատրապէս հողատիրութեան ձեւերի նշանակութիւնը գիւղատնտեսութեան բնոյթի վրայ, եւ այնուհանդերձ պետք է հակառակն արտայայտուեմ հողերի քաշխման հարցում նրա գերագնահատող նշանակութեանը» եւ, որ հողերի քաշխման հարցում սոցիալական պայմանները «խաղում են երկրորդական եւ նոյնիսկ երրորդական դեր»:

Կատարած երկրամասի դրամատիրական փոխակերպութեան հետ անցեալ դարի վերջին քառորդում ուժեղանում էր գիւղացիութեան քայքայումն ու շերտատրումը: Վերջինս Ս. Զաւարեանը մի զգալի մասով կապում էր հողերի վերաբաժանման առկայ սիստեմի թերութիւնների հետ, որն առաջ էր բերում սակաւահողութիւն եւ տարագնացութիւն: Ընդհանրապէս հաւանական հողատիրութիւնն արգելակում էր հողերի առք ու վաճառքը: Այնուհանդերձ, ինչպէս նկատում է Ս. Զաւարեանը, վարձակալական յարաբերութիւններն ընդունել էին լայն շափեր: Գիւղացիութեան թոյլ տարրերը բերքի մի մասի, կամ էլ վարկի դիմաց, իրենց ամբողջ հողաբաժինները որոշակի ժամանակով տալիս էին ունեւորներին, միաժամանակ աշխատելով նոյն հողամասում: Ընդ որում, այդ հողամասերը մնում էին վարկատու գնորդի մօտ՝ մինչեւ վարկի ու տոկոսի փոխհատուցումը: Առաջ էր եկել կիսավաճառքի ու կիսավարձակալութեան մի նոր ձեւ, ըստ որի հողն անորոշ ժամանակով մնում էր որպէս վարկատուի սեփականութիւն մինչեւ վարկատուն տո-

կոսի հետ շմարէր սպարտը: Իսկ քանի որ պարտքի մարումը յաճախ գործնականում անհնարին էր լինում, ուստի պայմանագրում վարկի շափը կրկնապատկում էր, եռապատկում եւ հողամասը ընդմիջտ ժառանգական ձեւով անցնում էր վարկատուին: Վարձակալական յա-



րաբերութիւնները գրեթէ ամբողջութեամբ իրագործում էին ունեւոր գիւղացիները:

Գիւղացիութեան քայքայման գործընթացում ոչ պակաս դեր են խաղացել հարկերն ու պարհակները: Ս. Զաւարեանը գոյութիւն ունեցող պարհակների քաշխումը սերտօրէն կապում էր հողերի քաշխման կարգի հետ: Նա «Հողային տուրքը եւ հարկերը Կովկասում» հետազոտութեան մէջ տուեալներ է բերում, ցոյց տալու այն անհամապատասխանութիւնը, որ գոյութիւն ունի ժողովրդի «տնտեսական ընդունակութեան», «հարկատու ուժի», եւ իրական հարկերի միջեւ: Այդ ուսումնասիրութեան շարժառիթը եղել է 1900 թ. Յունիսի 12ի «Կովկասում զանձուող ծխահարկի եւ նրա փոխարէն բահրատուրքի եւ հողային հարկի սահմանման մասին» օրէնքը: Հեղինակը մտորում է ոչ միայն հարկային քաղաքականութեան, այլ նաեւ տնտեսական զարգացման նախորդ եւ ընթացիկ փուլերի առաւելութիւնների ու թերութիւնների մասին: Նրա հայեցողութեան մէջ նկատում է որոշակի համակրանք աւատական յարաբերութիւնների նկատմամբ, ուր ամէն ինչ պարզ էր, շափաւոր ու ներդաշնակ: Ս. Զաւարեանի կարծիքով, 19րդ դարը խախտում էր անցեալի այդ համաշափութիւնը: Քաղքենի դասի իրատուների հաստատումը ուղեկցում է հարստութեան ու դասակարգային բեւոացումներով: «Եւ ահա, - գրում է նա, - շնորհիւ սանձարձակութեան հասցրած անհատական սեփականութեան գաղափարի, առաջ եկաւ մի տեսակ ծայրայեղ անհասարկութիւն հասարակութեան զանազան դասակարգերի միջեւ, որ վտանգաւոր եւ անտանելի է դարձած ընդհանուր բարեկեցութեան տեսակէտից: Սահման դնել տեխնիկայի, հաղորդակցութեան միջոցների եւ ապահովութեան զարգացմանը, անկարելի է: Ոչ մի համայնք, ոչ մի ազգ, ոչ մի պետութիւն չի ցանկանայ այդ անել եւ նոյնիսկ չի կարող զըրկեմարդկութեան մտքի այդ հզօր յաղթանակներից: Մնում է ուրեմն, - մտորում է Զաւարեանը, - փրկութիւնը փնտրել աշ-

